[illegible]

ՄԻՍԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Օրուան գիները են

Գըվըրճըգ 10½ ղրշ.
Գըզըլ քարաման 9½ »
Գառնուկ Ա. տեսակ 7 »
(10 օխանոց)
Տալըճ բնաւ չկայ։

ԿԱՐԱՊԵՏ ՊԷՇԻՐԵԱՆ

ՊԱՆՏԸՐՄԱՅԻ ԱՌԵՒՏՐ. ՀՐԱՊԱՐԱԿԻՆ

ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

ՀԱՆՐՕԳՈՒՏ ՁԵՌՆԱՐԿ ՄԸ

Մանզումէի Առեւտրական Բաժնին ձեռք բերած յաջողութիւնները անձամբ շնորհաւորելու առթիւ ձեր առաջարկին ի պատասխանի խոստացած էի տեղւոյս առեւտրական գործերուն վրայ զձեզ պարբերաբար վերահասու ընել, և միեւնոյն ժամանակ ձեր օգտակար ձեռնարկին մասամբ օժանդակած ըլլալու հաճոյքը վայելել։

Ուստի կը փութամ այս անգամ քաղաքիս առեւտրական ներկայ կացութեան վրայ մի քանի կարճ ծանօթութիւններ [illegible]

[illegible]

է։ Զգենք որ հիւսիսային խառնուրդ տնիւն հովին աւերներէն զերծ պիտի ըլլան մեր նաւերը, այլ ամէնէն կարեւորը սա է որ ձմեռն իսկ մեր արտածման և ներածման գործողութիւնք անընդհատ պիտի շարունակուին։ Սոյն շինութեան մասին թէ՛ Պրուսայի կուսակալ փաշային, թէ Գարասիի միւթեսարրըֆ պէյին և թէ տեղւոյս գայմագամ պէյին ջանքերը շնորհակալութեան արժանի են։

ԱՐՄԷՆ ՄՍՐԵԱՆ

Պանտրմա

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Կ. ՊՈԼՍՈՅ

(1905 29 Մարտ Երեքշաբթի)

ՑՈՐԵՆ

Ճերմակ Առաջին օխան $38\frac{1}{2}$-$38\frac{3}{4}$ փարա
» երկրորդ » $37\frac{1}{2}$-38 »
Մախլիւթ » $35\frac{1}{2}$-$36\frac{1}{2}$ »
Զավարըը » 32-34 »
Սէրթ առաջին, օխան $37\frac{1}{2}$-$37\frac{3}{4}$ փր.
» միջին տեսակ 35-36 »

Այսօր ժամանեց 11 վակոն ցորեն Անատոլ։

ԱԼԻՒՐ

Տեղական քըլմա Ա. պարկը 71-72 ղշ.
» » Բ. » 67-70 »

ԹԵՓ

Օխան 20 փարա։

ԳԱՐԻ

Բէօստէնճէ 12—$12\frac{1}{4}$ ղրշ. գիլէք
Մերսին և Րումէլի 11—$11\frac{1}{4}$ »

ԲԱՄԲԱԿ ԵՒ ՑՈՐԵՆ

ԼԻՎԸՐԲՈՒԼ, 10 Ապրիլ

Բամբակի հրապարակը բացուեցաւ.

Մայիս — Յունիս 4.13
Յուլիս — Օգոստ. 4.16 քիչ գործ կ՚ը,
Օգոստ. — Սեպտ. 4.17
Հոկտ. — Նոյեմ. 4.19

Ցորենի հրապարակը գոցուեցաւ.

Նիւ-Եորք Մայիսի համար $111\frac{1}{2}$
Լիվըրբուլ Մայիսի » 6.6/
» Յուլիսի » 6/$6\frac{1}{8}$
Շիքակօ Մայիսի » $117\frac{5}{8}$

(*) Պանտրմայի մեր յարգելի Սըղթակին այս թղթակցութեան վրայ մեր տեսութիւնը՝ տեղւոյս անձկութեան պատճառաւ՝ յաջորդ անգամ։— Մ. Խ.

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Այս խորագրին տակ օրով կը պատասխանենք թէ՛ Պոլսէն և թէ գաւառներէն մեզ ուղղուած հարցումներուն, պայմանաւ որ լուրջ և կարճ գրուած ըլլան և միմիայն առեւտրական, ելեւմտագիտական, երկրագործական և առեւտրական-օրէնսգիտական խնդիրներու հետ առնչութիւն ունենան։

×

ՏԻԱՐ Յ. Բ—Յ. (Ս. Հիսար). — Անգլիական ապրանաց վրայ «քրէտի» գտնելը խիստ դժուար է։ Ցամաքային Եւրոպայի գրեթէ ամէն գործարանները 6 ամիս պայմանաժամով «քրէտի» կ՚ընեն եթէ լաւ «ռէֆէրանս» առնեն։ Վարկին քանակութիւնը կախում ունի վաճառականին «ճիրօ»յէն և «ճիրօ»ն ալ գործողին նիւթական ու գործնական կարողութենէն և գտած ու տուած գիւրութիւններէն։ Այսու հանդերձ, մեր կարծիքով, սկսնակ առեւտրականի մը համար խոհեմութիւնը կը պահանջէ դրամագլուխին չափ «քրէտի» առնել և ո՛չ աւելի։

2.—[illegible]

[illegible]

Զէօմլէքճեանի իրաւագիտական յօդուածին շարունակութիւնը, Իզմիրի առեւտր. հրապարակը, ինչպէս նաեւ Բամբակի, Մետաքսի և Գաղթականաց հրապարակները։

ՍԻՄՈՆ ԶԷՕՄԼԷՔՃԵԱՆ

ԿԱՐՈՂ ՍԵՂԱՆԱՑՄԱՐԴԱՐ մը պատրաստ է տուներու, օթէլներու կամ մեծ ճաշարաններու մէջ պաշտօնստանձնել շա՛տ դիւրամատչելի պայմաններով։ Մէկէ աւելի պատուաւոր վկայագիրներ։ Դիմել կամ գրել Մեծ-Նոր խան, Յ. Գըլըճեանի հանրածանօթ գրավաճառատունը։

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

Իւսկիւտար Սէլամսըզ Թօփալ Գաչը, կանանաւոր 8 սենեակ, բաղնիք մը, հոր մը, տանիճ մը. ընդարձակ պարտէզ փառաւոր տեսարանով վարձու կը տրուի։ Մանրամասնութեան համար դիմել նոյն կարգը թիւ 256 տունը։

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Զ. ԳԻՅՍԷՐԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՍԵՐ 4

ՀԱՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

ՀԱՒՆՈՑՆԵՐԸ [1]

Հաւնոցները կրնանք երեքի բաժնել հետեւեալ կերպով.

Ա.— Գիւղական պարզ հաւնոցներ։

[illegible]

գին անոնց միջաւեղ բնակութենէն։ Իրաւ է որ երկյարկ հաւնոցներ կան որոնց առաջին յարկը սագերուն և բադերուն և երկրորդ յարկը միայն հաւերուն և երեք յարկով հաւնոցներուն երրորդ յարկն ալ աղաւնիներուն և աղաւնիներուն կը յատկացնեն, սակայն չէ՞ որ ասոնց ամէնուն ալ պըտըտելու պարտէզը, այսինքն հաւբակը միեւնոյնն է։ Ուրեմն վերը յիշուած անպատեհութիւնները կրնան հոս ալ յառաջ գալ։

Հաւազգիներու իւրաքանչիւր տեսակին զատ զատ տեղեր յատկացնելը աւելի ճիշդ և ուղիղ է։

×

Հաւնոցներու օժնութիւնը.— Գիւղական պարզ հաւնոցներ.

Կարգ մը ընդհանուր գիտելիքներ կան որոնց գործադրութիւնը անհրաժեշտ [illegible]

[illegible]

(1) Հաճոյքով կ՚իմանանք որ Տիար Հօտիոնի այս խղճամիտ և ժողովրդական ուսումնասիրութիւնը ո՛չ միայն հետաքրքրութեամբ կը կարդացուի մեր ընթերցողներուն կողմէ, այլ նաեւ թելադիր եղած է շատերուն, իբրեւ amateur հաւարոյծ, գործնականա- [illegible] (Մ. Խ.)

ԳԱՐԱՄԱՆ ՈՉԽԱՐԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տալըճ, Կրճիկ, Հէրէկ, Ցուրֆան.— Դմակին աղէկը որոշելու եղանակ.— Թուրք վաճառականի մը պատմութիւնը.

×

Գարամանի ըսուած ոչխարները գըլխաւորաբար Անատոլուի գաւառներէն կուգան և 5 տեսակ են։

Ա. տեսակը կը կոչուի տալըճ, որ Պրուսայէն, Էսկիշէհիրէն և շրջակայ գաւառներէն կը բերուի, թէեւ ուրիշ տեղերէ ալ կուգայ։ Ասոնց բուրդերը ընդհանրապէս ճերմակ կ՚ըլլան։ Սեւ բուրդով եղածները շատ քիչ են։ [illegible]

[illegible]

Բ.— Հաւնոցներու [illegible] (amateur) [illegible]

Գ.— [illegible]